**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ ՏԱՍԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-20/2**

ք.Երևան «28» « 04 » 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գայանե Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.02.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի 23.04.2020թ.-ի թիվ Ե-136/2020-Գ գրությունը՝ Պայմանագրով կանխավճար նախատեսելու վերաբերյալ, կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել կանխավճար՝ 65000000 (վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով և Պայմանագրում ավելացնել նոր 4.1.1 կետը հետևյալ խմբագրությամբ՝

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 65000000 (վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, 10 (տասը) բանկային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:»

1.2 Հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերենով, կնքված են երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ՀՀ, ք. Երևան, Բունաթյան-7 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 220533332767000 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00851011 |
| ՔԿ ծառայություն | Տնօրեն՝ |
| Ա. Ղազարյան | Գ.Մարգարյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«28» « 04 » 2020 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 55321100/517 | Սննդի պատրաստման ծառայություններ, թվով տասը ՔԿՀ-ներում | - | 83000000 | 209000000 | 464913200 | 464913200 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա. Ղազարյան
-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան-7
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն՝
Գ.Մարգարյան
-------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ